ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

Ի. Դ-ՈՎԻ

(Շարունակութիւն և վերջ [1])

III

Սթէֆ, ծանօթանալով այն թշուառ դեռահաս սերնդի ներկայացուցիչների հետ, որոնցից են Բուրժէն և նորա վէպերի հերոսները, մենք զգացեցինք ծանր, տանջող զգացումով, խառն կարեկցութեան և համակրութեան հետ, մտնելով ուրիշ ունական թուականների երիտասարդութեան ներկայացուցիչների շրջանի մէջ մենք, կարծես, հէնց ուղղակի խեղդում ենք, շւարում ենք, ցանկանում ենք աչքերս փակել, քթերս բռնել, ականջներս խցել, չհոտ դառնալ ու փախչել առանց չհոտ նայելու։ Այս մարդիկը,—այն տեսքով, ինչպէս նկարադրում է Բերանժէն,—ամենևին նման չեն իրական կեանքից ճնշած և տանջանքների մէջ հեծող երիտասարդներին, որոնց մասին արդէն խօսեցը։ Սոքա ամբողջապէս նեխուած են և նման են զարդարուն գերեզմանների, որոնց ներքինը մեզ զզւեցնում է և ակամայ սարսուռ է ազդում։ Այդ մարդիկն այժմ 20—25 տարեկան են և իրրև գործիչ մտնում են հասարակական-քաղաքական գործունէութեան ասպարէզ։ Նոցա գաղափարական ներկայացուցիչն է հանդիսանում նրանց ընկերակիցը, երիտասարդ, ո՛չ այնքան տաղանդաւոր, բայց շատ անկեղծ վիպագիր Մօրիս Բարրէսը, որ ուշա-

[1]) Տե՛ս «Մուրճ» № 11։

դրութեան է արժանացել երկու, իրանց ներքին բովանդակութեամբ և մտքով բնաորոշ գրուածքներով—Sous l'oeil des Barbures (*բարբարոսների աչքի առաջ*) և Un homme libre (*Ազատ մարդ*)։

Հարևանցի նկատենք, որ Բարրէսը, բացի սրանից և քաղաքական գործիչ է. նա եռանդուն մասնակցութիւն է ցոյց տւել «անանի դեներալի» դատապրութեան գործում հասարակապետութեան դէմ, և մինչև կոկորդը խրած է Բուլանժիզմի մէջ։ Իւր վերոյիշեալ վէպերում, որոնք ինքնակենսագրութեան բնաւորութիւն ունին, նա զարմանալի պարզութեամբ բաց է անում ընթերցողների առաջ իւր և ընկերակիցների մեռած հոգիների գաղտնիքը։ Զսպենք առժամանակ մեր բնազդական զզուանքը այդ մեռելութիւնից և տեսնենք թէ ի՛նչ են ներկայացնում այդ հոգիները։ Իւր գրուածքների տողերում Բարրէսն աշխատել է պատկերացնել իրան հետ հոգով սերտ կապած ժամանակակից «ազատ մարդու», «ինտելլիգենտի» տիպը, որի վերայ չորս կողմից աչքերը յառել են «բարբարոսները»։ Բայց նախատեսենք թէ ովքեր են այդ բարբարոսները։ Խոքա, լա՛ւ իմացէք, ժողովրդի, դիմոկրատիայի ներկայացուցիչներն են. այն մարդիկն են, որոնք լուրջ հայեացք ունին կեանքի վրայ և աշխատանքի ամեն ճիւղերում՝ թէ՛ մտաւոր և թէ՛ ֆիզիքական, եռանդուն կերպով աշխատում են։ Դա ամբողջ ժողովուրդն է, ամբողջ աշխատող մասսան, բացի մի քանի ընտրեալներից՝ «ինտելլիգենտներից»։ Աեենք, այս որոշումն էլ բոլորովին ճիշտ չէ՛. «բարբարոս», բառի բուն նշանակութեամբ, ամբողջ հասարակութիւնն է, ամբողջը, բոլոր մարդիկ, ամբողջ մարդկութիւնը, բացի իրանից՝ «ինտելլիգենտից» (Բարրէսը, ի հարկէ, ինտելլիգենտ է)։ Իսկ ի՛նչ է «ինտելլիգենտը». Օ՛հ, նա մարդկային ցեղի ամենահրաշալի տիպարն է. նա ընտրեալ, վեհ արարած է, նա երկրի աղն է. նա տեղծագործութեան թանկագին ակն է. նա հրափայլ, արեգակի բոլոր գոյները իւր մէջ ցոլացնող ադամանդ է, աղբի մէջ ընկած (այսինքն մարդկութեան մէջ) նա ամեն տեսակ գեղեցկութեան ուղտածուծն է, նա Ոլիմպիական է, որ հրճուում է իւր մեծութիւնը և հոգեկան կատարելութիւնները դիտելով, և սառն արհամարհանքով է նայում իւր շուրջը խուռնած մարդկային ամբոխի՝ այս ողորմելի ճճիների վրայ... խոնարհեցէ՛ք այս փառաւոր, լուսաճաճանչ պատկերի առաջ։

Իսայց... բայց այդ ո՞վ էր, որ մեր «ինտելլիգենտին» Ալիմպիականների կարգը դասեց, ո՞վ նրան այս աշխարհից հասցրեց այդ շլացնող բարձրութեանը: Ինչ իրաւունքով 0, այդ իրաւունքը նորան տրւած է աւելի քան հարկաւոր է: Ո՞րն է արդեօք մարդկային, բնութեան ամենաբարձր յատկութիւնը. ի՞նչ ասել կուզի, հոգու ազատութիւնն է, իսկ նա՝ «ինտելլիգենտը» հոգով կատարեալապէս ազատ է: Մինչ մարդկային ողորմելի ամբոխը՝ ողորմելի մարդկութիւնը քաշ է գալիս երկրի վրայ ձեռքն ու ոտը կաշկանդւած ամեն կերպով, ամեն տեսակ պարտականութիւններով և այլն և այլն, նա, «ինտելլիգենտը», միանգամայն ազատ է, կատարեա՛լ ազատ ամեն կողմից. ազատ է ինչպէս երկնքի թռչունը, ուստի և հանդարտ ութեթև, առանց նեզելու ո՛ր և է անօգուտ, թռիչքը դժւարացնող բեռից, կարողանում է բարձրանալ մինչև ամպերը և սաւառնել «բարբարոնների չնչին ամբոխի» վրայով: Այդ ամբոխը, որ ամբողջապէս բաղկացած է չիմար ու ապուշներից, հնարել է իրան համար մի ինչ որ բարոյականութիւն, որ շղթայի դեր է կատարում: Դուրս է տւել ինչ որ անհեթեթ հասկացողութիւններ բարոյական պարտքի, բարոյական պարտականութեան մասին, երբեմն երբեմն երազում է ինչ որ «սուրբ» իդէալներ, նրանց համար գլուխը քարին ու պատին է խփում, գլուխ է տրաքեցնում ինչ որ «հարցերի» վրայ, անզօր կերպով որոնում է ինչ որ գոյութեան վեհ նպատակներ, կեանքի վեհ խորհուրդներ: Ինչ չիմարութիւն... Այս ամենը տեսնելիս «ինտելլիգենտը» ինչպէս չը զգայ իւր անհուն գերազանցութիւնը այդ բոլոր կոյտերից, այդ դաշտամիներից. ինչպէս նա չարհամարհ նրանց, նա, որ արձւի նման կտրել է բոլոր կապանքները, որ ոչ մի ճնշում չի ճանաչում, որ ազատէ ամեն տեսակ բարոյական «պարտքերից» և «պարտաւորութիւններից», որ վանդակից դուրս է պրծել ազատ օդի մէջ, և արծւի նման սաւառնում է կեանքի ճահճից բարձր: Նա ոչնչով չի վրդովւում, ոչնչի վերայ չի տխրում, ոչնչի չի ձգտում: Նա գտել է ճշմարտութիւնը, նա լմնցնել է գոյութեան խորհուրդը, նրան յայտնի է կեանքի նպատակը: Նա, այո՛, գիտէ, իսկ նոքա, ողորմելի «բարբարոնները» չը գիտեն,—և ահա՛ հէնց այդ գիտութեամբ նա յանդուգն բարձր է ամբոխից և իրաւունք ունի նորան արհամարհելու:

Ինչպէս «ինտելլիգենտի» մտածած ամեն մի դանդաղեղ բան,

այնպէս էլ կեանքի բոլոր հարցերի վճիռը շատ պարզ է երևում։ Այդ վճիռն ամբողջապէս կայանում է շատ կարճ, բայց չափազանց արտայայտիչ «նշ» բառի մէջ։ «Նշ»-ը միմիայն իրական է, նորանից դուրս ոչինչ չը կայ մարդուս համար. նա անհատական կեանքի միակ նպատակն է։ Բոլոր շրջապատող աշխարհը մարդուն հետաքրքրում է, մարդու համար խորհուրդ և արժէք ունի ճիշդ այն չափով, ինչ չափով նա ծառայում է «նշ»-ին, այլ Աստծուն, բացի որից ուրիշ Աստուած չկայ։ «Նշ»-ի շահերն ու ցանկութիւնները միակ օրէնքն են, որից բարձր չը կայ և չի կարող լինել ո՛չ մի օրէնք։ Անպատճառ զարգացնել «նշ»-ը, ո՛րքան կարելի է, նրա ախորժակներին լիուլի բաւականութիւն տալ, ընդունակ դարձնել նորան ամեն տեսակ վայելքների համար, հաճելի զգացողութիւններով նորան պարարել, ահա՛ թէ ի՛նչպէս պէտք է առաջնորդւի «ինտելիգենտ» ամբողջ գործնական կեանքը։ Եթէ այս ճանապարհի վերայ «նշ»-ի ցանկութիւնները հակառակ լինեն միւս մարդկանց, նոյն իսկ ամբողջ հասարակութեան շահերին, այն ժամանակ վա՛յ այդ շահերին, որովհետև «ինտելլիգենտը» առանց երկար մտածելու, առանց տատանւելու զոհ կը բերի նրանց իր Աստուծոյ տաճարը, եթէ միայն հնարաւոր լինի։ Զարմանալի էլ կը լինէր երկար մտածել, տատանւել, նպատակին հասնելու համար միջոցների մէջ խտրութիւն դնել։ Չէ՞ որ Աստծուն պաշտօն մատուցանելով նա ամենակարող է և ամեն ինչ իրան թոյլատրւած է համարում, չէ որ շրջապատող աշխարհը հէնց միմիայն նորա համար է պէտքական, որ մարդ նրանից օգտւի, որ նրան գործ ածի յօգուտ իր «նշ»-ի։ Մենք մեր կարիքներին զոհացում տալու համար օգտւում ենք Աստծու կենդանի արարածներով. նրանց մի քանիսին լծում և բեռնում ենք, մի քանիսին խուզում ենք բուրդ ստանալու համար, ուրիշների կաշին ենք քերթում հագուստ և կօշիկ պատրաստելու համար, շատերին մորթում ենք և մսից կերակուր պատրաստում... Ճիշտ այդ եղանակով և հանգիստ սրտով իրաւունք է համարում իրան վերաբերել դէպի մարդկային ամբոխը այն գերագոյն արարածը, որ հպարտութեամբ իրան անւանում է «ինտելլիգենտ»։ Արդարև, ամբոխի ներկայացուցիչները՝ արհամարհած «բարբարոսները», որոնք իրանց սահմանափակ մտքով չեն ըմբռնել կեանքի մեծ խորհուրդը, նոյնպէս

շատ ազատութեամբ են վերաբերում դէպի շրջապատողները, բայց չը ճանաչելով այն «ճշմարտութիւնը», որ յայտնի է «ինտելլիգենտին», չը կարողանալով այդ ճշմարտութեան լուսով տեսականապէս արդարացնել իրանց «ազատ» գործողութիւնները, նոքա սովորաբար շփոթւում են, երբեմն խզճահարւում են, յաճախ մինչև իսկ զղջում են, և ընդհանրապէս իրանց արածը չը գիտեն։ Միանգամայն ուրիշ բան է «ինտելլիգենտը». ի՛նչ էլ որ անէ, նա միշտ իրան կը համարէ անպայման արդար, և այդ գիտակցութիւնը նրան տալիս է զարմանալի ինքնավստահութիւն, հոգեկան հանգստութիւն, նորան հոգեպէս զօրացնում է, նա ինքը իւր աչքում բարձրանում է այնպիսի բարձրութեան, որին հասարակ մահկանացուները անկարող են հասնել։ Նա՛ է իւր վարմունքի միակ բարձրագոյն դատաւորը, դատաւոր, որ միշտ արդարացնում է իրան և որի սէնտքը չէ՛, թէ շրջապատողներն ի՛նչ դատաստան կանեն, ի՛նչ վճիռ կը կայացնեն։ Իսկապէս նորա համար այն աստիճանի անկներև են իւր առաւելութիւնները շրջապատողներից, այնքան զրկէ իրանից, այնքան զբաղւած է իւր «եսո»-ի հոգսերով, որ միանգամայն անտարբեր է գէպի շրջապատող կեանքը։ Այդ գեռ ոչինչ... նա, եթէ կուզէք՝ պատրաստ է բոլոր շրջապատողներին կրակ տալ այրել. այդ նորա «եսո»-ին մի նոր, անծանօթ ուրախութեան զգացում կը պատճառէ։ Բայց ափսոս, նա այդ չի կարող անել. արտաքին աշխարհը նրան հարկաւոր է նոյն թանկագին «ես»ին պահպանելու համար. առանց արտաքին աշխարհի նա ո՛չ մի կերպ չի կարող ապրել։ Այդ պատճառով էլ, թէև նա կատարելապէս արհամարհում է հասարակութիւնը, որի մէջ բաղդը ձգել է նորան, բայց խոյս չի տալիս այդ հասարակութիւնից, չի առանձնանում, խցկւին կեանք չի վարում...

Ա՛յս է, ահա՛, «ինտելլիգենտը»։

Մենք կը բերենք մի քանի բնաւորիչ օրինակներ Բարրէսի շարագրութիւններից, որոնցով ընթերցողը գաղափար կը կազմէ, թէ ո՛րքան ճիշդ է մեր արած բնաւորագիծը։

«Ես սիրում եմ, որովհետև սիրելն ինձ հաճելի է,— ասում է Բարրէսի հերոսներից մէկը,— բայց իսկապէս, ես միայն ինձ եմ սիրում...» «Սիրել, գրկել աշխարհը ես ուրիշ կերպ չեմ կարող, բայց եթէ ինձ գրկելով, ինձ անվերջ սիրելով...» «Ո՛չ թէ ես զարմանում

եմ ինձ վերայ, հիանում եմ ինձանով, այլ... ես ինձ անսահման դուր եմ գալիս...» «Անվրդով հոգով սեպհական «ես»-ին բաւականութիւն տալու համար պէտք է ստեղծել մի «աշխարհ», որից դուրս վռնտուի առնային մեծ գաղափար պարտականութեան մասին...» «Բանը նրանումն է, որ պէտք է համոզել, թէ ո՛չ մի ճշմարտութիւն չը կայ, այլ կան զանազան տեսակէտեր, որոնցից իւրաքանչիւրը միւսին հակառակ է, և թէ մենք, եթէ յաջողակ լինենք, նորանցից ո՛րն ուզենանք, կարող ենք ընդունել, նայելով հանգամանքներին...» և այլն։ Պարզ է, որ այս այսպէս լինելուց յետոյ, մի անգամ այս համոզմանը գալուց յետոյ այլ ևս մարդու համար կարևորութիւն չը կայ ուրիշ համոզմունք ունենալու։ Եթէ նա քաղաքական գործիչ է, ամենևին չը պէտք է իրան սահմանափակէ որ և է մի վարդապետութեան շրջանակում և դրան հաւատարիմ մնայ. ո՛չ, նա կարող է ուզած կողմը դառնալ, նայելով հանգամանքների ընթացքին, և, եթէ «ես»-ի շահը պահանջում է, ընտրել նաև ծուռ ու մուռ ճանապարհներ։ «Ամեն բանի մէջ ճարպիկ ու յաջողակ դուրս գալու համար մարդ պէտք է պատրաստ լինի բոլոր ուղեցած միջոցները, բոլոր ոյժերը գործ դնելու։ «Ի հարկէ, ես շատ լաւ եմ հասկանում բարձրագոյն շկօլայի այս խեղկատակութիւնը, ես այդ արհամարհում եմ, ինչպէս արհամարհում եմ ամէն ինչ աշխարհիս վերայ, բայց աստուածացնում եմ նրան...» և այսպէս շարունակ։

Revue des deux Mondes-ի անցեալ տարւայ փետրուար 1-ի համարում տպւած է մի ոտանաւոր, չափազանց բնաորոշ—La Citadelle, որ Էմմնդ Գոնկուրի դրչի տակից է դուրս եկել. նորանից պարզ երևում է, թէ ինչ ոգով էին երգում այն երիտասարդ սերնդի բանաստեղծները, որին պատկանում է Բարրէսը և նորա վէպերի հերոսները, այսինքն 80-ական թուականների բանաստեղծները։ Բերում ենք այդ ոտանաւորն ամբողջութեամբ։

„Si tu veux être grand, bâtis la Citadelle,
Loin de tout et trop haut, bâtis la pour toi seul,
Qu, elle soit imprenable et vierge, et qu'autourur d'elle
Le mont fasse un rempart et la neige un tinseul

C'est là qu ilfaut bâtir l'asil de ton âme.
Et pour que ton désir y soit la seule loi
Que rien n'accède á lui, de l'éloge ou de blâme.
Grave sur ton seuile blanc le mot magique: Moi.

Tu n'as qu'une patrie au monde c'est toi mème,
Chante pour elle et sois ton but, et sais ton voeu;
Chante, et quand tu mourras, meurs dans orgueil suprème
D'avoir vécu ton âme et fait vivre ton dieu!

Ի՜նչ փառաւոր արհամարհանք դէպի շրջապատող կեանքը, ի՜նչպիսի յափշտակութիւն սեպհական աստուածային «ես»-ով, ի՜նչ անսահման եսականութիւն է հնչում այս տողերի մէջ։ Այսպէս է, ահա՛ 80-ական թուականների երիտասարդ սերնդի հոգեկան ներկայացուցիչը։ Սա ծայրահեղ, ինքնագոհ, ոչնչով չը վրդովուող սկեպտիկ է, չ'ունի ni foi ni loi (ո՛չ հաւատ, ո՛չ օրէնք), նրբացած, անգութ, ինքն իրան աստուածացնող էգօիստ։ Բայց ո՞րտեղից առաջ եկաւ նա։ Այս հարցը տալով, Բերանժէն նկատեց, որ Բուրբէեան «ինտելլիգենցիան» 1880 թուականի երիտասարդութիւնը ցեղական նմանութիւն ունի 1872 թուականի իրանց նախորդ սերնդին։ Վերջիններիս նման նրանք էլ սկեպտիկ են, սորանց նման դիլլետանտ և իրանց սեպհական «ես»-ին խնկարկող, «ես»-ին, որ նրանց աչքում միակ դրական բանն է աշխարհում։ Նոքա կարդացել են նոյն գրքերը, ենթարկուել նոյն, սոցիալական ազդեցութիւններին, բայց շնորհիւ այն հանգամանքների, որ նրանք աւելի ուշ են ծնուել, նոցա վիճակուել է աւելի քիչ տանջել»։ Ազատ լինելով այն ճնշող, մեռած սխոլաստիկական սրամտութիւններից և դառն, ապրող հիասթափումներից, որ նրանց նախորդներին էր վիճակուած, «նոքա ընդունեցին և չափազանցութեան հասցրին նոյն զազափարները, ինչ որ նոցա նախորդները ընդունել էին ծանր ներքին կռւից յետոյ, ընդունել էին ամաչելով...» «Նոքա՝ յետնորդները իրանց աւողջութիւնն էին գտնում այն բարոյական հիւանդութեան մէջ, որին գոհ էին գնացել նախորդները, և որից բաժանուելու հնար չունէին. խաբուսիկ առողջութիւնն, որ աւելի վատ էր քան նոյն իսկ մահը...։ Այդ երկու սե-

րուններըը միժեանցից տարբերուում են որոշ գծով. մինչ Բուրժէն և նորա ընկերները գաղափարների աշխարհն էին ընկած, Բարրէսը և այն երիտասարդները, որոնց ուխտարն է նա, դուրս եկան գործնական կեանքի ասպարէզ և զբաղուեցին առաջինների գաղափարը կեանքի մէջ իրագործելով։

Այսպէս է, ըստ Բերանժէի, 80-ական թուականներում երևան եկած երիտասարդ «ինտելլիգենտների» և «ազատ մարդկանց» ցեղագրութիւնը. դոքա մեր օրերի իսկական հերոսներն եղան։ Այս ցեղագրութիւնը կարելի էր աւելի պարզաբանել, լրացնել ուրիշ տարբերով, բայց տեղի պակասութիւնը մեզ թոյլ չի տալիս այժմ դրանով զբաղուելու։

IV

«Արդեօք նախորդ սերնդի ոգո՞վ է մնում կեանքի մէջ և նոր սերունդը, որի ներկայացուցիչներն այժմ 18—25 տարեկան են։ Արդեօք այս սերունդն էլ չի՞ դառնալ դիլլետանտների սերունդ և չի՞ տեսնիլ արդեօք գոյութեան նպատակը նոյն անհատական պեսսիմիզմի մէջ». Հարցնում է Բերանժէն գալով իւր ժամանակակից, 90-ական թուականների սերնդի գնահատութեանը, նորա բարոյական կեանքի նկարագրութեանը։ Ընթերցողին, ո՛րքան կարելի է, ճիշդ գաղափար տալու համար այժմեան ֆրանսիական ինտելլիգենտ երիտասարդութեան հոգեկան զարգացման մասին, և նորա մասին, թէ ինչպէս է ցոյց տալիս այդ զարգացումն ինքը՝ երիտասարդութիւնը, մենք կ՚աշխատենք խօսել, որքան հնարաւոր է, մեր հեղինակի իսկական խօսքերով։ «1890 թուականի ինտելլիգենտ երիտասարդութիւնը,—նկատեց ի միջի այլոց Բերանժէն,—միանգամայն խզեց, այն էլ գլխաւոր կէտերում, իւր կապերը անմիջական նախորդներից։ Նորա մէջ այժմ կատարւում է մի փոփոխութիւն, որը դեռ որոշուած չէ, ուրեմն և պարզ չէ, բայց, հաւանօրէն հսկայական է։ Սրէցօր հասարակական ոգին զարթնում է նոր եռանդով, և մտքերի այս նոր ուղղութեան վերջնական յաղթութիւնը ժամանակի ինդիր է։ Այժմ ըմբռնում են, որ ո՛չ մի միտք կեանքի մէջ առանձնացած երևան չի գալիս, թէ կայ հաւաքական հոգի, որ կազմում է բոլոր անհա-

տական հոգիներից, և այդ ըմբռնումը նոր ուղղութիւն է տալիս նորագոյն սերնդի բոլոր ձգտումներին, բոլոր գործողութիւններին։ Հոգիները նւանդուն կերպով բարձրանում են, արտայայտւում է զօրեղ, յուսալի վերածնութիւն։ Իսկապէս ասած վերածնութիւնն այսօրւանից չի սկսւում։ Նա խուլ կերպով պատրաստւում էր սակաւաթիւ ընտրեալների և մտածողների մէջում, որոնք նոր մտաւոր շարժման առաջնորդներ հանդիսացան։ Այդ մտածողները հետացրին այն խոչընդոտները, որոնց մի ժամանակ հանդիպում էր և որոնց վերայ խորասկւում էր երիտասարդութեան միտքը, որ անյագաբար որոնում էր ճշմարտութիւնը և դէպի լոյսն էր ձգտում։ Նոքա քանդեցին այն պատերը, որոնց խիտում էր երիտասարդութիւնը իւր գլուխը, երբ «անիծւած» հարցերին պատասխան էր ուզում գտնել։ Նոքա այդպիսով նոր ինտելլիգենցիայի համար ճանապարհ հարթեցին, նորա աչքի առաջ բաց արին լայն, մտաւոր հորիզոն։ Այսպէս է կարծում, գոնէ, Բերանժէն։

Նախկին, յուսահատ յուսահատութեան հասցնող փիլիսոփայական վարդապետութիւններին ծանր լծից ազատւելուն նպաստեցին մի քանի հեղինակներ, որոնց մէջ Բերանժէն ամենից առաջ մատնանիշ է անում Բուտրուի վերայ, որը իւր Contingence et lois de la nature (բնութեան պատահականութիւնը և օրէնքները) շարադրութեամբ ուժգին հարւած տւեց պատճառականութեան վարդապետութեանը, պարզ ցոյց տալով, որ ամէն մի երեւոյթի մէջ կայ չը վերջացած ոչ լրացած մի մաս, որն ստիպում է ենթադրել, թէ բնութեան մէջ կայ ինքնակամ գործողութեան տարր...»։

Բուտրուից յետոյ ասպարէզ եկան Ֆուլիէ [1]) և Գիւյո [2]) որոնք հիմնաւորապէս հաստատեցին գազափար-ոյժերի (idées-forces) վարդապետութիւնը, և բացատրեցին այն մեծ ճշմարտութիւնը, թէ մարդը մեքենայ չէ, կոյր գործիք չէ, չի՛ ենթարկւում միմիայն կրաւորապէս արտաքին բնութեան ոյժերին և ազդեցութիւններին և դնում այն կողմը, ուր նրան մղում են այդ ոյժերը. այլ նա մի ինք-

---

[1]) Liberté et déterminisme,—L'idée du droit. L'avenir de la morale, de l'art et de la religion,—L'évolutionisme des idées-forces.

[2]) Esquise d'une morale sans obligation ni sanction. L'irréligion de l'avenir. Les problèmes de l'esthétique contemporaine. L'art au pointdevue sociologique. Education et hérédité.

նուրջն գործնական արարած է, որ կարող է իւր մտքով աղդել աշխարհի վրայ, նրան ձևափոխել իւր ցանկութիւնների համաձայն, բարեկարգել նրան իւր կամքով և ծրագրով։

Նոյն ուղղութեամբ գործեցին և գեղարուեստական և փիլիսոփայական քննադատութեան մի քանի ներկայացուցիչներ, ինչպէս օրինակ, Բրիւնէտիէր, որ զօրեղ հարուած տուեց նատուրալիստական դրական շկոլային,— Մելխիօր-դը-Վոգիւէ, որ ֆրանսիական հասարակութիւնը ծանօթացրեց «ռուսական ոգու» հետ, ինչ չափով որ սա արտայայտուում է ռուսական վէպի մէջ,—Գաբրիէլ Սարրազէն, որ ցոյց տուեց Շելլիի, Տէննիսոնի և ուրիշ անգլիական մեծ հեգինակների գրուածքների սոցիալական մեծ նշանակութիւնը,—Էմիլ Էնիկէն, որ տապալեց Տէնի անվերջ պատճառականութեան տէօրիան և նորա տեղը դրեց արդէն Կարլէյլի գուած ճշմարտութիւնը, թէ սոցիալական կամ գրական շարժումներն առաջ են գալիս մարդկային հոգու, մեծ մարդկանց հերոսական ոգու շնորհիւ։

Սոքա են, Բերանժէի ասելով, այժմեան ֆրանսիական ինտելլիգենցիայի ամենագլխաւոր ուսուցիչները։ Մաքի այս մշակներն իրանց երկիրով. մեծապէս ազդեցին երիտասարդութեան վրայ, գարթնեցրին նորա միտքը, նորա առաջ բացին լայն, լուսաւոր, գաղափարական հորիզոն, ներշնչեցին հաւատ դէպի անհատի կարողութիւնը, ցոյց տուին, որ հնարաւոր է ներգործել շրջապատող կեանքի վրայ, մղեցին նրան ընդարձակ, կենդանի գործունէութեան ճանապարհը, խրախուսեցին, բարձրացրին նորա ոգին, մի խօսքով մատաղ հոգիներին զարկ տուին, վերակենդանացրին։

Ինչ եղաւ այդ գաղափարական ազդեցութիւնների արդիւնքը։ Դրանք ազատեցին երիտասարդութիւնը նեղ, սառն, թմրեցնող պոզիտիվիզմից (դրական փիլիսոփայութիւն), չոր, մեռցնող նիւթապաշտութիւնից և այսպիսով դրաւեցին նոր զարթած, մատաղ հոգիները դէպի բարձր, իդէալական աշխարհը, որտեղ նրանք ներշնչեցին համաշխարհային ոգով, որտեղ սեփական «ես»-ն սկսեց շատ փոքր ու չնչին երևալ, նա այլևս չէր կարող մտածողութիւնների և ձգտումների միակ կենտրոնը լինել։ Վերապրելով այդ մեքուր աշխարհը, երիտասարդութիւնը շուտով տեսաւ և հասկացաւ, որ բացի փոքրիկ անձնական «ես»-ից, մի անսահման աւելի մեծ, աւելի

վեհ, աւելի կարևոր և օգտաւէտ բան կայ, մի բան, որից դուրս «եսս»-ը ո՛չ խորհուրդ ունի, ո՛չ նպատակ, որից նա ոյժ է ստանում, որի շնորհիւ միայն կեանք ունի, զարգանում է, կատարելագործւում է և վայելքնեւր է ստանում: այդ է կենդանի մարդկանց մեծ շրջանը, հասարակութիւնը, մարդկութիւնը: Աննհատը կարող է հասնել ամենաբարձր զարգացման և կատարելութեան, կարող է աւելնամեծ չափով զ արձութիւն վայելել միմիայն այն ժամանակ, երբ կը միանայ այդ մեծ ամբողջութեան հետ, որի ամենափոքր մասն է նա, միմիայն ձուլւելով նորա մէջ, նւիրելով նրան իւր բոլոր ոյժերը, իւր ամբողջ հոգին, միանգամայն մոռանալով իրան: Ի՛նչքան շատ նւիրւի նա հասարակութեանը, ա՛յնքան շատ աշխատած կը լինի իւր «եսս»-ի համար, ա՛յնքան կապահովէ իւր երջանկութիւնը: Բայց այդ մեծ ամբողջութեան ամենամեծ մասը կազմում է աշխատող մասսան՝ ժողովուրդը, բառի լայն և ճիշտ նշանակութեամբ: Ուրեմն այդ ժողովրդի շահերը պէտք է լինեն կենդանի, խորհող մարդու բոլոր մտածողութեանց միակ առարկան, և ո՛չ թէ այն նեղ շրջանինը, որոնց մէջ պատոյտ է գալիս ժամանակակից ինտելլիգենցիայի ներկայացուցիչը: Այդ շահերին չի՛ կարելի ծառայել ուրիշ կերպ, բայց եթէ լոյս և ջերմութիւն սփռելով նորա մէջ գիտութեան կենատու աղբիւրից, տարածելով նորա մէջ գիտութիւն, այդ զօրեղ, ազատարար ոյժը... Այսպէս, ուրեմն, գիտութիւն և ժողովուրդ. ահա՛ այն երկու կախարդիչ խօսքերը, որոնց մէջ անփոփուում է անհատական կեանքի խորհուրդն ու նպատակը, որոնք պարզ արտայայտում են ցանկալի ճշմարտութիւնը, հասկանալի են դարձնում կեանքի գաղտնիքը, առաջնորդում են դէպի կենդանի, զովացնող ջրի աղբիւրը: Սոցա, այս բազմաբովանդակ խօսքերի մէջ են պարունակւում ամենայն օրէնք և մարգարէք:

Թերևս մենք աւելի լրիւ, կանոնաւոր և որոշ արտայայտեցինք Ֆրանսիական ինտելլիգենտ երիտասարդութեան դեռ նոր կազմող profession de foi-ն, քան մեր երիտասարդ ճառախօսը իւր ճառի մէջ: Իսկ թէ մենք ամենևին չենք մեղանչել այդ ճառի հիմնական մտքերի դէմ և չենք մոցրել նորա մէջ մեր սեփական մտքերն ու հայեացքները, ընթերցողը բանին կարող է համոզուել հետեւեալ կտորներից. «նոր սերունդը կը լինի, նախ և առաջ, սոցիալական, ասում

է մեզ Բերանժէն,—ուրիշ խօսքով, նա, թէ՛ արուեստի, թէ՛ գիտութեան, թէ՛ քաղաքականութեան մէջ, թէ՛ մտքով և թէ գործով կը հակւի դէպի նոր հասարակութիւնը, ցոյց կը տայ որ յոյս և հաւատ ունի գիտութեան և դիմոկրատիայի վերայ, կարտայայտէ իւր սէրը դէպի ժողովուրդը և հայրենիքը»։ Գիտութիւն և դիմոկրատիա, ահա ապագայ հասարակական զարգացման երկու ամենագլխաւոր, ամենագօրեղ գործօններն են։

Նախորդ դիւետանտ սերունդները չէին ցանկանում, գուցէ և չէին կարող այդ հասկանալ. «նոքա վճռեցին, թէ գիտութիւնը և դիմոկրատիան արդէն սնանկացել են, նոցա ոյժն արդէն սպառւել է։ Այդ ճիշտ կը լինէր, եթէ գիտութեան վերջին խօսքը լինէին միայն պոզիտիվիզմը և ինդուստրիալիզմը, եթէ դիմոկրատիան միայն տիրապետող պլուտոկրատիային ծառայելու ընդունակութիւն ունենար։ Բայց չէ որ դոքա անցողական երևոյթներ են, դոքա բժշկող չարիք են, չարիք, որի պատճառով մենք չը պէտք է աչքից թողնենք այն մեծ շարժումը, որ նոր կեանքի հորիզոն է բացանում մեր առաջ։ Պոզիտիվիզմի այլ ևս գոյութիւն չունի, և կը գայ, յուսով ենք, մի օր, երբ գործարանական աշխատութեան հնճռոտ հարցնել կը վճռւի, դորա հետ կը վճռւի նաև պլուտոկրատիայի հարցը»։ Ի վերջոյ «նոր կեանքի զարգացումը պէտք է լինի հոգու միջոցով, իսկ հոգու ամենաբարձր, ամենագործնական, ամենարդիւնաւոր սկզբունքն է սէրը»... Ահա՛ ոտքա են այն գաղափարներն ու հասատալիքները, որոնցով յառաջ է դիմում ինոեվլիգենտ երիտասարդութեան նոր սերունդը։ Այդ գաղափարների շնորհիւ կարող է վերածնել մի հասարակութիւն, որի մէջ իւրաքանչիւրի «եսը» ընդհանրութեանը հակառակ չի լինիլ և որի մէջ գաղափարը և գործը ձեռք ձեռքի ուած յառաջ կընթանան»... «փոխանակ խեղաթիւրուած, մանրացած, այլակերպուած «ես»-ի, որ դիլետանտների և պեսսիմիստների ամբողջ սեփականութիւնն է, առաջ կը գան լուրջ և զօրեղ հոգիներ, որոնք կատարելապէս ընդունակ կը լինեն նոր ոգով ներշնչւելու, նորանով ոգուրւելու»... «Մենք չենք կարող ուրիշ կերպ ձեռք բերել և եռանդ. և հաւատ, որոնցից են ծագում մեծ գործերն ու արուեստները, բայց եթէ ներշնչւելով գիտութեան և ժողովրդականութեան ոգով, ոգևորւելով բարոյական գաղափարով, և միանալով մեծ, հանրային հոգու հետ։